

Հաստատում եմ՝ 6 դեկտեմբերի 2022 թ.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական գծով պրոռեկտոր,

Գիտության գիտությունների դոկտոր,

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ավետիսյան Պարզն Սերգեյի



ԿԱՐԾԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Աննա Անդրանիկի Մելքոնյանի

«Կանխենթադրույթը ֆրանսալեզու լրագրային խոսույթում»

Ժ.02.07 – «Ռուսականագիտական լեզուներ/ռուսական լեզուներ/»

մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

Ժամանակակից տեղեկատվական դարաշրջանը ամուր աղերսներ ունի համաշխարհային լրատվական միջավայրի, մեկ ընդհանուր տեղեկատվական և սոցիալ-մշակութային տարածքի ստեղծման հետ: Խոսքն այստեղ նոր տեղեկատվական քաղաքակրթության մասին է, երբ մեդիաարտադրանքը թափանցում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Այսօր մեդիա եզրույթը կիրառվում է տարբեր գիտական դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչների կողմից, որպես մի շարք հասկացությունների բաղկացուցիչ մաս. մեդիաիրականություն, մեդիաքաղաքականություն, մեդիամշակույթ, մեդիակրթություն, մեդիախոսույթ և այլն: Սրանցից առավել վիճահարույցը մեդիախոսույթի կամ լրագրային խոսույթի, նրա էության ու ժանրային առանձնահատկությունների հարցն է:

Մարդկության պատմության մեջ բազում են օրինակները, երբ լրագրողական խոսքի համոզկերտ, ազդեցիկ և մանիպուլյատիվ հարուստ գործիքարանի գործադրմամբ հնարավոր է դարձել իրականացնել հասարակական կյանքի ներքին կարգավորումներ, հասարակական հնչեղություն ունեցող կնճռոտ հարցերի լուծումներ: Մերօրյա հասարակական-քաղաքական ուղղվածության լրատվական տեքստերում դիտվում են լեզվաոճական այնպիսի հնարքների կիրառություններ, որոնց նպատակը ոչ միայն տեղեկացնելն է, այլև հուզական ներազդեցության միջոցով իրադարձությունների վերաբերյալ հասարակական կարծիք ձևավորելը: Դա նկատելի է նաև ֆրանսերեն լրագրային լեզվում, որն ուսումնասիրության նյութ է դարձրել Աննա Անդրանիկի Մելքոնյանն իր ատենախոսության մեջ: Այն նվիրված է ֆրանսալեզու լրագրային խոսույթի արտակա մակարդակում արտահայտված իմաստի՝ կանխենթադրույթի ուսումնասիրմանը՝ դրսևորման, իմաստավորման և գործառման ամենատարբեր առանձնահատկությունների մեջ:

Գրախոսվող ատենախոսությունն ունի կոռ կառուցվածք: Աշխատանքը ներկայացվում է երեք գլուխներում, որոնցից առաջինը նվիրված է լրատվական խոսքի՝ մեդիախոսույթի ստեղծման տեխնիկային և մեթոդաբանությանը, ժանրային և լեզվաոճական առանձնահատկություններին, երկրորդը՝ մեդիահաղորդակցությունում եղանակայնություն և արժեաբանական հարաբերություններ արտահայտող լեզվական միավորների դրսևորումների վերհանմանը, վերջին գլուխը վերաբերում է մեդիախոսույթում բազմաձայնության դրսևորմանը: Ատենախոսության մեջ կատարված գիտական վերլուծությունը վերջում ձևակերպված է եզրակացություններում: Աշխատանքն ավարտվում է օգտագործված գրականության ցանկով: Այս տեսանկյունից՝ ատենախոսության ծավալն ու շարադրանքի գիտական պատշաճ մակարդակը համապատասխանում են ՀՀ-ում թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Այսպիսով սույն ատենախոսության ուսումնասիրության առարկան մեդիախոսույթն է, սուբյեկտիվություն/օբյեկտիվություն և ներակա իմաստ

հասկացությունները, դրանց հիմնական բնութագրիչները: Այս դասակարգման հիմքում նպատակադրումն է, ըստ դրա են որոշվում խոսքի կազմման կառուցվածքային պլանավորումը, ոճը, բառաշերտի և քերականական միջոցների ընտրությունը, փաստարկման միջոցների գործադրումը, տրամաբանականության, հիմնավորվածության, հուզականության, պատկերավորության, տպավորչության անհրաժեշտ բաժինը, ինչով և պայմանավորված է աշխատանքի գիտական նորույթը:

Սույն աշխատանքն արժեքավոր է իր տեսական և գործնական առումով, որի մշակմանը խիստ նպաստել են հայ լեզվաբաններ Գ. Ջահուկյանի, Ս. Աբրահամյանի, Լ. Բրուտյանի, ռուս լեզվաբաններ Ն. Արուտյունովայի, Ա. Բարանովի, ամերիկյան իմաստաբանական դպրոցի ներկայացուցիչ Ն. Խոմսկու, խոսքային ակտերի հեղինակ Ժ.-Լ. Օստինի, գործաբանական լեզվաբանության ներկայացուցիչ Վան Դեյկի խոսույթի վերլուծությանը նվիրված ուսումնասիրությունները, ֆրանսիական լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչներ Է. Բենվենիստի, Պ. Շարոդոյի, Դ. Մենգոնյի, Օ. Դյուկրոյի, Կ. Կերբրա-Օրեկիոնիի և այլոց աշխատությունները, որոնք էլ հանդիսանում են գրախոսվող ատենախոսության տեսական հիմքը:

Ուսումնասիրության համար լեզվական նյութ են ծառայել ֆրանսիական մամուլում տպագրված հոդվածներ, ինչպես նաև տարբեր հեռուստաալիքներով թողարկված հարցազրույցներ, քաղաքական գործիչների ելույթներ:

Ելնելով աշխատության թեմայի առանձնահատկություններից՝ հեղինակն իր ուսումնասիրությունը կատարում է ժամանակակից լեզվաբանության մեջ լայն տարածում ստացած լեզվաբանական վերլուծության համադրական, հակադրությունների, բաղադրիչային և համատեքստային, ինչպես նաև մեկնաբանման հերմենևտիկական մեթոդների համալիր կիրառմամբ:

Տեսական նյութի խորը վերլուծությունը վկայում է, որ հեղինակը լավատեղյակ է իր ուսումնասիրությանն առնչվող ամբողջ լեզվաբանական գրականությանը: Խրախուսելի է, որ նյութի վերլուծության ընթացքում համաձայնելով որոշ դրույթների

հետ կամ մերժելով դրանք, հեղինակը ներկայացնում է ուսումնասիրության նյութի վերաբերյալ իր սեփական փաստարկներն ու դիտարկումները: Այս առումով նորովի և ծանրակշիռ են հնչում ատենախոսի մեկնաբանությունները լրագրային խոսույթում կարևոր դեր ունեցող այնպիսի երևույթների մասին, ինչպիսիք են փաստարկումը, եղանակավորությունը, բազմաձայնությունը և այլն:

Հաշվի առնելով խոսքի՝ մարդկանց համատեղ կյանքի ու գործունեության կառավարման գործում ունեցած հսկայական դերակատարությունը՝ ատենախոսն իրավամբ կարևորում է խոսքի ճիշտ գործադրման ու գեղեցիկ արտահայտվելու հմտությունների զարգացումը՝ ատենախոսության տարբեր բաժիններում շեշտադրելով բառընտրության և բառաձանաչման կարևորությունը, ընդգծելով գիտելիքահենք խոսքի կառուցման պահանջը մեր օրերում:

Այսպիսով Ա. Ա. Մելքոնյանի թեկնածուական ատենախոսությունն ընդհանուր առմամբ հաջողված աշխատանք է, սակայն գուրկ չէ թերություններից, թեպետ դրանք մասնակի բնույթ ունեն, ուստի և չեն սովերում մեկնաբանված հարցերի գիտական արժեքը: Այսուհանդերձ, նշենք դրանց հետ կապված մի քանի նկատառում.

1. Էջ 25-ում ատենախոսն արդարացիորեն նշում է, որ «Լրագրողը, նպատակ ունենալով համոզել իր հասցեատերերին, տեղեկատվություն հաղորդելու իր գործառույթը համակցում է գրավելու գործառույթի հետ, ուստի և իր ռազմավարական վերջնանպատակներին հասնելու համար կիրառում է *հռետորական հնարներ*»: Լիովին կիսելով ատենախոսի տեսակետը, գտնում ենք, որ այնուամենայնիվ այս խնդրին բավարար ուշադրություն չի դարձվել ատենախոսության մեջ, ըստ մեզ՝ նախընտրելի կլիներ, որ ատենախոսն ավելի լայն անդրադարձ կատարեր լրագրային խոսքում կիրառվող հռետորաբանությանը, հռետորական հնարներին:
2. Ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ լեզվով, սակայն որոշ դեպքերում, մեր կարծիքով, եզրաբանական ճշգրտման կարիք կա, օրինակ Էջ 13-ում առաջարկում ենք «ասության *լեզվաբանության* շրջանակները»

արտահայտությունը փոխարինել «ասության լեզվաբանական կամ լեզվական շրջանակ» արտահայտությամբ, նույն էջում «խոսույթային կազմություն» բառակապակցության փոխարեն՝ «խոսույթային կառույց» և այլն:

3. Աշխատանքում առկա են որոշ անճշտություններ լեզվաբանների անուն-ազգանուններում, օրինակ, էջ 19-ում և ամենուր ֆրանսերեն սխալ է գրված ֆրանսիացի լեզվաբան Միշել Արիվեի ազգանունը՝ M. Arrive, փոխանակ՝ M. Arrivé, էջ 32-ում հայերեն սխալ է տառադարձվել M. Le Guern-ի ազգանունը՝ Լե Գերեն, փոխանակ՝ Լը Գերն, էջ 54-ում հիշատակվում է լեզվաբան Ս. Գիմիերը, ակնհայտ է, որ խոսքը ֆրանսիացի հայտնի լեզվաբան Կլոդ Գիմիեի մասին է:
4. Ատենախոսությունը գերծ չէ նաև որոշ սխալներից, օրինակ, էջ 56-ում ատենախոսը, մեջբերելով հայտնի լրագրողի խոսքը՝ «je souris mais ça ne vaut pas la peine», հայերեն մեկնաբանում է՝ «ես ժպտում եմ առանց ջանքեր թափելու», այնինչ նրա խոսքը տրամագծորեն հակառակ իմաստը, ուստի և հակառակ նպատակադրումն ունի՝ «ես ժպտում եմ, բայց չարժեր դրա համար նեղություն քաշել, իմա՝ իմ հաղորդած եղանակային վատ կանխատեսմամբ չեմ կարող ձեզ ուրախացնել, իզուր ջանքեր եմ գործադրում»:

Հարկ է նշել, որ Աննա Անդրանիկի Մելքոյանի հրապարակած հոդվածներն ու սեղմագիրը լիովին արտացոլում են գրախոսության ներկայացված ատենախոսության հիմնական բովանդակությունը, իսկ ատենախոսությունն իր ընդհանուր գիտական մակարդակով, արդիականությամբ, գիտական նորույթով և տեսագործական արժեքով համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Հեղինակն արժանի է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի:

Վերոնշվածը թույլ է տալիս միջնորդել ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առաջ՝ Աննա Անդրանիկի Մելքոյանին շնորհելու:

բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը Ժ.02.07 «Ռուսնագերբանական լեզուներ» մասնագիտության գծով:

Գրախոսականը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2022 թվականի դեկտեմբերի 6-ին կայացած N5 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ի. Կարապետյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Սիմոնյանը, բ.գ.դ., դոցենտ Մ. Սարինյանը, դոցենտ Ն. Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝
Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր՝

Հաստատում եմ՝ 6 դեկտեմբերի 2022 թ.

Գիտքարտուղար,
բ.գ.թ.՝



Ա. Ա. Սիմոնյան

Ռ. Ս. Կասաբաբովա